7. Դատական ծախսերի և հայցի ապահովման միջոցի վերաբերյալ եզրահանգում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի մերժման պայմաններում Դատարանը գտնում է, որ պետական տուրքի մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հայցի ապահովման միջոցի մասով Դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցի ապահովման միջոց կիրառված չլինելու պայմաններում հայցի ապահովման միջոցի վերացման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետությունում «Սիներջի Ինթրնեշնըլ Միսթըմզ» բաժնետիրական ընկերության մասնաճյուղի հայցն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, երրորդ անձ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար՝ «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման (հանրային ներդրումային ծրագրերի ինտեգրված թվային համակարգի ձևավորման)» ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԷՆ-ԵՄԾՁԲ-22/75 ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի 31.08.2023թ. թիվ 13 արձանագրության 2.1 կետով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին հաղթող ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**